ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՀԵՆՐԻԿ ԵԱՅԼՈՅԵԱՆ ՈՐ ՄԱՐԻՈՒՊՈԼ, ՈՒԿՐԱԻՆԱ

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Ցարգարժան պրն. Եայլոյեան,

Ուկրաինայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթեանի միջոցով փեղեակ ենք Ձեր ազգօգուտ ու եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեանը: Դուք գնահատելի վաստակ ունէք Ուկրաինայի Մարիուպոլ քաղաքում բնակեալ հայորդեաց կեանքում՝ իբրեւ հայ համայնքի նախագահ եւ անդամ եկեղեցական վարչութեան: Ձեր անձնական նախաձեռնութեան ու սրտաբուխ բարերարութեան արգասիքն է Մարիուպոլ քաղաքում կառուցուած Սուրբ Յարութիւն եկեղեցին, որ փարիներ շարունակ իր դռներն է բացել հաւատացելոց առջեւ: Աղօթատունը նոր հնարաւորութիւններ է ընձեռել հայրենի հողից հեռու, Մարիուպոլ քաղաքում ապրող մեր ժողովրդի զաւակների հոգեւոր-եկեղեցական կեանքի առաւել արդիւնաւոր կազմակերպման համար, որպէսզի նրանց հոգիներում շարունակի զօրաւոր մնալ ու շնորհագործել առ Աստուած մեր սուրբ հաւատը: Արդարեւ, հաւատքի նուիրական օջախ ու հայապահպանութեան փարոս են Սփիւռքի մեր եկեղեցիները՝ սրբախորհուրդ Սուրբ Էջմիածնի օրհնութիւնը եւ հայրենիքի շունչը Մեր զաւակներին հասցնելու եւ նրանց հոգիներում սէրն ու հաւատարմութիւնը նախնեաց աւանդներին զօրացնելու համար:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ նախանձախնդիր ջանքերով յաջողութիւններ էք արձանագրել նաեւ Մարիուպոլում առաջիկային հայկական նոր եկեղեցի կառուցելու աշխատանքներում: Առաքինի գործերով Դուք բարի օրինակ էք մատուցում հաւատաւոր հայորդեաց՝ յանձնառութիւններ ստանձնելու եւ որդիական անսակարկ սիրով ու հաւատարմութեամբ ծառայելու հարազատ մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին եւ սիրով ընդառաջ ելնելով Թեմական Առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի Բարձրեալի շնորհների եւ ամենախնամ օրհնութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենասեւանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 16-ն յունիսի
յամի Տեառն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 516